ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Գրիգոր Մինասյան, ՀՀ արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ), 2023թ. հոկտեմբերի 1-ից 6-ը:

Հրավիրող կողմը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանց:

Գործուղման նպատակը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի (այսուհետ՝ ՏՀԶԿ ՀԿՑ) լիագումար նիստին:

Քննարկված թեմաները՝ Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում» ՏՀԶԿ զեկույցին, Հայաստանի, Ադրբեջանի և Մոլդովայի վերաբերյալ Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի (այսուհետ՝ ՍԳԾ) մշտադիտարկման զեկույցների 5-րդ փուլի ընդունմանն առնչվող և այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը ՏՀԶԿ ՀԿՑ լիագումար նիստին, որը ներառում է նաև ՍԳԾ մշտադիտարկման 22-րդ նիստը, ինչպես նաև՝ Ղեկավար խմբի 28-րդ հանդիպումը, մասնակցելու նպատակով 2023թ. հոկտեմբերի 1-ից 6-ը գտնվել է Ֆրանսիայի Հանրապետությունում (Փարիզ):

Բացի այդ, Արդարադատության նախարարի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է նաև Հայաստանի Հանրապետությունը գնահատող ՏՀԶԿ մշտադիտարկման խմբի հետ կայացած երկկողմ բանակցություններին, որի ընթացքում քննարկվել է «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում» ՏՀԶԿ զեկույցը:

Հարկ է նշել, որ դեռևս 2023թ. ապրիլին 18-ից 21-ը տեղի է ունեցել ՏՀԶԿ պատվիրակության այցը ՀՀ՝ 2022 թվականի դեկտեմբերից մեկնարկած ՏՀԶԿ ՀԿՑ ՍԳԾ գնահատման հինգերորդ փուլը (այսուհետ՝ Գնահատում): Գնահատումը ներառել է 9 կատարողական ոլորտներ, որոնք ընդգրկել են ոչ միայն Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, անկախ և ինքնավար մարմինների, իրավապահ մարմինների գործունեության ոլորտները, այլև՝ մասնավոր ոլորտի իրավաբանական անձանց, պետական մասնակցությամբ կազմակերպությունների գործունեությունը:

Արդարադատության նախարարի գլխավորած պատվիրակության և ՏՀԶԿ մշտադիտարկման խմբի և քարտուղարության միջև կայացած երկկողմ քննարկումների և բանակցությունների ընթացքում դիտարկվել է Գնահատման բոլոր 9 կատարողական ոլորտները: Բանակցությունների և քննարկումների արդյունքում հաջողվել է բարձրացնել դատական իշխանության անկախությանն առնչվող կատարողական դաշտի գնահատականները, շտկել զեկույցի նախագծում առկա ձևակերպումները՝ ՀՀ-ում հակակոռուպցիոն բարեփոխումներն առավել ճշգրտորեն ներկայացնելու համար: Գնահատման արդյուքներով ամենաբարձր միավորներ տրվել են հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանը և մոնիթորինգի իրականացմանը, դատական համակարգի անկախությանը, բարեվարքությանը՝ գնման համակարգում:

ՏՀԶԿ ՀԿՑ լիագումար նիստի ընթացքում Արդարադատության նախարարի գլխավորած պատվիրակության հետ քննարկվել է ՏՀԶԿ ՀԿՑ ՍԳԾ գնահատման հինգերորդ փուլի հայաստանյան զեկույցը: Լիագումար նիստի արդյունքներով

հաստատվել է ՏՀԶԿ ՀԿՑ ՍԳԾ գնահատման հինգերորդ փուլի հայաստանյան զեկույցը: Զեկույցի գնահատումը տևելու է մինչև 2026 թվականը, որի ընթացքում ՀՀ-ն ներկայացնելու է ՏՀԶԿ-ի կողմից ստացված հանձնարարականների կատարման հաշվետվություններ, իսկ վերջինս գնահատելու է կատարված բարեփոխումների համապատասխանությունը տրված հանձնարարականներին:

Արդարադատության նախարար

X

ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Signed by: MINASYAN GRIGOR 3312830419

Գրիգոր Մինասյան

10.10.2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ արդարադատության նախարարություն**

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **ՀՀ վարչապետի 2023թ. սեպտեմբերի 14-ի թիվ 940-Ա որոշման**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ **Գրիգոր Մինասյան Արդարադատության նախարար**

4. Գործուղման վայրը՝ **Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ)**

5. Գործուղման ժամկետները՝ **2023թ. հոկտեմբերի 1-ից 6-ը**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) (թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ)

հրավիրող կողմ՝ ճանապարհածախս գիշերավարձ, օրապահիկ

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անուն, ազգանուն 1*	*Անուն, ազգանուն 2*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)			
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)			

	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (*նկարագրել*)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)				

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ